

ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՅ

LORD BE MERCIFUL TO ME

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1991

ՓՈԽԱՆ ՅԱՌԱԶԱԲԱՆԻ

Աղօթքը որ իր անձի կամ մերձաւորի համար կ'արտասանէ հաւատացեալը ի՛ր հասկցած ձեւով և ի՛ր բառերով, կրնայ ըլլալ գոհութեան արտայայտութիւն առ Աստուած, և կամ՝ Բարձրեալին ուղղուած խնդրանք ու աղերս: Կայ նաեւ հաւաքական աղօթք, երբ կը հայցուի Աստուծոյ ողորմածութիւնը ոչ թէ առանձնակի տուեալ անհատի, այլ ընդհանուրի համար: Այդպիսին է «Տէր Ողորմեա»ն, որ հարիւրամեակներ շարունակ հայ Զրիստոնեան երգած է ու կ'երգէ եկեղեցական արարողութիւններու ժամանակ իբրեւ "Ցասման ժամ"--ու երգ, դժբախտութեան թէ վշտի մէջ, նեղութեան թէ անձկութեան պահին: Այնքան մեծ է եղած «Տէր Ողորմեա» աղօթք-պաղատանքի վայելած ժողովրդականութիւնը, որ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը, 18-րդ դարուն, մեր պատմութեան այդ ծանր ժամանակշրջանին, անոր նմանողութեամբ յօրինեց "Արի Աստուած հարցն մերոց..." բանաստեղծութիւնը. վերջինս ձուլուեցաւ "Տէր Ողորմեա"-ին ամփոփելով իր մէջ մեր դարաւոր վիշտն ու տառապանքը, արտասուքն ու ողբը և մինչեւ այսօր, պատարագի ընթացքին, ողջ հաւատացեալ ժողովուրդը կը մասնակցի անոր կատարման ծնկաչոք ու աղերսաւի դիմելով Աստուծոյ, հայցելով անոր ողորմութիւնը:

Պարզ ու անպաճոյժ, բայց և նոյնքան խոր ու գեղեցիկ այս աղօթք-երգի քննութեանն է նուիրուած ահա Ա. Նորատունկեանի ներկայ հետազօտութիւնը:

Ծաւալով ոչ մեծ իր այս գրութեամբ հեղինակը կը ջանայ վերլուծել «Տէր Ողորմեա»ն, մանրակրկիտ քննութեան ենթարկելով առանձին բառեր ու արտայայտութիւններ. իր բացատրութիւնները ան յաճախ կը հիմնաւորէ զուգահեռներով ու համեմատութիւններով, որոնք քաղուած են Սաղմոսներէն, աւելի յաճախ՝ Նոր Կտակարանէն: Այդ ձեւով, խոր ու բազմակողմանիօրէն ուսումնասիրուած են հետեւեալ հատուածները. «Տէր Ողորմեա», «Ամենասուրբ Երրորդութիւն», «Տուր Աշխարհիս Խաղաղութիւն», «Եւ Հիւանդաց Բժշկութիւն», «Ննջեցելոց Արքայութիւն», «Ազգիս Հայոց Այցելութիւն», «Արի Աստուած Հարցն Մերոց», «Որ Ապաւէնդ Ես Նեղելոց»:

Ա. Նորատունկեանի կատարած աշխատանքը աներկբայօրէն խրախուսանքի արժանի գործ մըն է: Ընթերցողին, անտարակոյս հաճոյք պիտի պատճառէ իրեն սիրելի ու հարազատ երգի խորքը թափանցելու, աւելի լաւ ըմբռնելու և հասկնալու այն հնարաւորութիւնը որ կու տայ սոյն գրքոյկը: Գնահատելով հեղինակի վաստակը, կը փափաքինք որ յառաջիկային, նոյնպիսի ջանասիրութեամբ և բժախնդրութեամբ ան իր ուշադրութեան առարկան դարձնէ երգի նաեւ մնացեալ հատուածները ու բնագիրը ներկայացնէ արդէն ամբողջական վիճակով:

Յովնան Եպիսկոպոս
Առաջնորդ

Յուլիս 11, 1991

**ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԳՈՒԹԻՒՆ
ՏՈՒՐ ԱՇԽԱՐՀԻՍ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀԻՒԱՆԳԱՑ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
ՆՆՋԵՑԵԼՈՑ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ
ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ
ԱՐԻ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ
ՈՐ ԱՊԱԻԷՆԴ ԵՍ ՆԵՂԵԼՈՑ**

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Մարգարեաշունչ Հին Կտակարանի երաժշտական Սաղմոսներու գովաբանական և տաղաչափեալ օրհնաղօթֆներուն մէջ ամենամօտ թախանձանք աղօթքը որ կը մօտենայ Հայ Առաքելական Եկեղեցւոյ «Տէ՛ր Ողորմեա» աղերս աղօթֆին՝ 67-րդ և 51-րդ Սաղմոսներն են:

Պատարագամատոյց՝ «Տէ՛ր Ողորմեա» աղերսին մէջ, ապաշխարանքի հոգին, աւելի շեշտուած է քան թէ Սաղմոսներուն մէջ: Բասներորդ դարու հայաւանդ ժառանգութիւնը, գրաւական մըն է, որ Աստուած միայն մէկ ցեղի, կամ մէկ ժողովուրդի Աստուածը չէ, այլ բոլոր ազգերուն, լեզուներուն և ցեղերուն Աստուածն է:

«Տէր Ողորմեա» աղերսի հեղինակը՝ իր աղօթք պաղատանքով ոչ թէ երաժշտութիւն կամ բանաստեղծութիւն մը յօրինած է, այլ՝ ստանալով աստուածային ներշնչում և ուժգնութիւն, ան կը խնդրէ թողութիւն, բժշկութիւն և յոյս աղօթող անձին համար: Ըլլան անոնք լուռ ունկնդիրներ կամ ծնրադիր մրմնչողներ:

«Տէ՛ր Ողորմեա» աղօթք աղերսը դիտելու չէ՛ որպէս ազգաբանասիրական և թանգարանային գոհար մը, այլ՝ որպէս երկնասուր զօրութիւն, որ կը շարժէ ու կը յուզէ ոչ միայն նիւթը և մարմինը, այլ մարդկային հոգին որ երկնքի հորիզոնն է և լուրթիւնը որ Հոգիին ձայնն է: Մարգարեաշունչ ներշնչումի ոգին էր, որ խանդավառեց և ստեղծագործ դարձուց Ս. Նարեկացին ու Ս. Ծնորհալին, ոչ թէ միայն իրենց դարուն համար, այլ յաւերժութեան:

Աստուած՝ միայն Յորդանան գետի ափերու տարածքին ապրող Հրեայ ժողովուրդին չփչեց Իր ծունչը, այլ դրկեց Իր սրբագործող Հոգին նաեւ Արարատեան այբուբենագիր Հայ ժողովուրդին ալ: Թէեւ «Տէ՛ր Ողորմեա»ն կանոնագրուած չէ Սաղմոսաց մէջ, սակայն երկնաշունչ մատենագրութիւն է: Անոր թէ՛ խօսքերը և թէ երաժշտական թրթռացումները խորհրդագրած վերացումներ կ'արթնցնեն մարդու հոգւոյն մէջ ու ենթական կը բարձրացնեն Պայծառակերպութեան կատարը և մասնակից կ'ընեն զինք երկնաւորին և մարդկայինը՝ Աստուած-Որդիին հետ: Մեծ

Խորհուրդի ներկայութեան՝ մարդ էակ, յափշտակուած աստուածային բնութիւնը ձայնէն, կ'իմանայ Արարչին հրաւերը ոչ թէ որպէս սոսկում, այլ՝ որպէս շնորհալի օրհնութիւն և առաջնորդութիւն ու կը ճանչնայ իր Տէրը որպէս սեր և ներում շնորհող Աստուած-Որդի:

«Տէ՛ր Ողորմեա»ն անբաղդատելիօրէն հզօր է և վեհ 67-րդ Սաղմոսէն: Սաղմոսերգը գովաբանութիւն է ստացուած շնորհներու համար, մինչ

**«Տէ՛ր Ողորմեա»ն անձնազոհ աղօթք է
համայն մարդկութեան մեղքերու թողութեան և ապաշխարութեան համար:**

**Ա. Նորատունկեան
1997**

ՏԷՐ ՈՂՈՐՍԵԱ

«Տէր» բառին իմաստը Ա. Գրքին մէջ բազմազան է և տարբեր կրօնֆներու մէջ ինքնուրոյն նշանակութիւններ ունի:

«Տէր» բառին հայերէն ծագումը կամ արմատը՝ «տի» և «տէ» բառերէն կու գայ, որոնք կը գործածենք որպէս «տի այն», «տի կիներ» և «տի ճշմարէտ» որ կը նշանակեն մեծ այր կամ մեծ կին:

«Տէր» բառին հակահիշն է «անտէր», խեղճ, դժբախտ և անծարակ: Այս է պատճառը որ հաւատացեալ անձ մը, ո՛ր կրօնքի որ ալ պատկանի, կը ձգտի դէպի Գերագոյն Էակի մը, համասփիւռ Հոգիի մը կամ Արարիչի մը հովանաւորութեան: Գանատայի հիւսիսաբնակ կարմրամորթ հնդիկներ իրենց աստուածը կը կոչեն «Մանիթու», որ կը նշանակէ մեծ կամ վսեմ Հոգի:

«Տէր», նաեւ արհունական անուն է ու կը նշանակէ իշխան: Նախարարական աւագ անձը, որ կը ժառանգէ իր հօր իշխանութիւնը, կը կառավարէ և կը վայելէ անոր կալուածները՝ կը կոչուի *տաւուտէր*, այսինքն իշխան:

Աւետարաններու մէջ՝ երբ ժողովուրդներ "Տէր" կը կոչեն Նազովրեցի Մարգարէն, ասիկա նշանակ է պարզ տիար կամ *պարուն*, բառին: Սակայն Յիսուս Զրիստոս՝ Իր Յարութենէն վերջ, երբ առաջին անգամ երեւցաւ թերահաւատ Թովմասին և հրաւիրեց զինք որ ձեռքը մխրճէ Իր կողը, Թովմասի բացազանչութիւնը եղաւ.

«Տէ՛ր իմ և Աստուած իմ»:

Թովմաս աշակերտին «Տէ՛ր» վկայութիւնը այս պարագային, որպէս "տիար" կամ "պարուն" չէր, այլ որպէս տիեզերքի՝ Տէրն ու Արարիչը:

Պօղոս առաքեալ Յիսուս Զրիստոսի Յարութենէն մօտ 15 տարիներ յետոյ, երբ կը գրէ Կորնթացւոց եկեղեցիին, իր հոգեշունչ վկայութիւնը կ'ըլլայ.

***«Եւ ոչ ոք կրնայ ըսել, "Յիսուս Տէր է",
բայց միայն՝ Սուրբ Հոգիով»--ԺԲ. 3:***

Հրեական խորհրդագրաց մտածումը, դժուարաւ ըմբռնեց Յիսուս Զրիստոսը որպէս *Տէր*, որովհետեւ իրենց հաւատքը զիրենք կը ստիպէր, որ ճանչնան *զՆաւուած* միայն Տէր: Պօղոս Առաքեալ երբ բացատրել կը ջանայ Յիսուսի խոնարհութիւնը և մեծութիւնը,

Փիլիպպեցիներուն ուղղած բանասիրութեան մէջ, ան սապէս կը վերջացնէ իր փաստարկութիւնը.

*«Ասոր հաւար ալ Աստուած աւելի բարձրացուց
զայն և անոր շնորհեց անուն մը՝ որ վեր է անէն
անունէ, որպէսզի Յիսուս Բրիստոսի անունով
խոնարհի անէն ծունկ՝ ըլլայ երկնաւորներու,
երկրաւորներու թէ սանդարամետականներու. և
անէն լեզու խոստովանի թէ Տէ՛ր է Յիսուս
Բրիստոս՝ ի փառս Հայր Աստուծոյ» --Բ. 9-11:*

Եթէ վերոյիշեալ վկայութիւնները բաւարար չեն մեզ խոստովանելու Յիսուս Բրիստոսը որպէս **Տէ՛ր**, կարդանք սրբազան Գրութեան, Յայտնութիւն Ա. 14-18 համարները միասին, ուր հրաշքէ հնոցի մէջ ծխացող պղնձագոյն երեւոյթ՝ Յիսուս կ'ըսէ.

«Ան նիմ փականքները մահուան ու դժոխքին»:

Վերոյիշեալ համարը կը նշանակէ թէ Յիսուս է մեր անպարտելի Ազատարարն ու Փրկիչը: Մահէ, բնաջնջումէ և անյայտութենէ մեզ վերակենդանացնողը պիտի ըլլայ Յիսուս Բրիստոս **Տէ՛րը**, ի փառս Աստուծոյ: Մարդ արարածներ, որոնք ծննդագործուած էին որպէս հողեղէն և փխրուն, եղէզ մը, իրենց անխուսափելի վախճանն էր մահն ու գերեզմանը: Արդեօք շա՞տ է վկայակոչել Յիսուս Բրիստոս որպէս **Տէ՛Ր**, երբ Ի՛նք պիտի կանչէ մեզ անյայտութենէ՝ մահէ, ու յարուցանէ շնորհելով մեզի յախտնական կեանք և կեանք իսկական:

ՈՂՈՐՄԵԱ

Հին Կտակարանին մէջ, «ողորմութիւն» բառը թէեւ զանազան իմաստներ ունի, սակայն երբայերէն գլխաւոր բառը, *«րահմ»* բառն է: Նաեւ Գուր՛անի մէջ արձանագրուած է Արաբերէն լեզուով *«էլ Բահման էլ Բահիլիմ»* համարը, որ կը գովերգէ Աստուծոյ ողորմածութիւնը, որ կու գայ *«րահմ»* բառ արմատէն, որուն հայերէն թարգմանութիւնն է *«արգանդ»* մայրենի ծննդարան:

Արեւելեան հոգեմտաւոր աւանդութեամբ, հաւատացեալ մը ինքզինք կը նկատէ *արգանդածին*, արարած մը և զինք Մնող Արարիչը կը կոչէ *«էլ Բահման էլ Բահիլիմ»* բարեգութ, գթասիրտ և

ողորմած, որվհետեւ ինձ **մասնիկ** մըն է զինք ծննդագործող և ստեղծագործող Աստուծոյ:

Հաւատացեալ մը երբ ողորմութիւն կը հայցէ Աստուծմէ, այս ոչ թէ վախի և երկիւղի հետեւանք սեպուելու է, այլ՝ *սիրոյ և վստահութեան*: Մոյն վստահութիւնը նշանակ է, որ մարդ ճանչցած է Աստուծոյ սէրը, որ Բնութեան կողողէ աշխարհ: Մարդ կ'ապա-
ւինի Արարիչ Աստուծոյ, որովհետեւ Անոր ողորմութիւնը ձրիօրէն և անսակարկ կը բաշխուի Յիսուս Քրիստոսի աննահանջ Խաչելու-
թեամբ համայն մարդկութեան *"թէ՛ բարիներուն և թէ՛ չարերուն"*:

Հին Կտակարանի մարգարէները, թէեւ ջանացած էին բացատրել և արտայայտել աստուածային ողորմութիւնը, սակայն չէին կրցած ըմբռնել զԱստուած կամ ներթափանցել Անոր խորքը և Անոր սիրոյ Խորհուրդը:

Մովսէս մարգարէն կը ջանայ ներկայացնել *"Վառող Մորենիին"* Աստուածը որպէս ողորմած և գթած միայն՝ ի՛ր Իսրայէլի ժողովուրդին հանդէպ: Աստուածային ողորմութիւնը, Մովսէսի հայեացքով, *սահմանադրական և պայմանադրական* է: Աստուծոյ ողորմութիւնը կը յայտնուի Եգիպտահպատակ Իսրայէլի, ազա-
տելով զանոնք գերութենէ և ծառայութենէ, սակայն անդին մեռցնելով բոլոր Եգիպտացիներու անդրանիկները:

Հին Կտակարանի մէջ Աստուծոյ համա-մարդկային սէրը ծածկուած է *ազգայնամոլ* նկատումներու ներքեւ: Որովհետեւ հրէական մտածումի ենթահողը պայմանադրական և *օրէնտրական* է սկիզբէն: Հին Օրինաց մարգարէները շփոթած են ու չեն կրցած պայծառօրէն տեսնել աստուածային անսակարկ և համա-մարդկային սէրը: Կարդանք Եսայի մարգարէին ԿԳ. 9,10 համարները.

*Մը երեսին հրեջտակը զանոնք ազատեց
Իր սիրովը և գթութիւնովը զանոնք փրկեց
էւ զանոնք վերցուց ու հին ժամանակին բոլոր
օրերուն մէջ զանոնք կրեց
Բայց անոնք ապստամբեցան ու Անոր Անորք Հոգին
բարկացուցին
Անիկա ալ դարձաւ անոնց թշնամի եղաւ,
և Ինք անոնց հետ պատերազմ ըրաւ»*

Եզեկիէլ մարգարէն՝ Բայլ մը եւս կը նահանջէ ճշմարտութենէ և զԱստուած կը նմանցնէ *վրէժխնդիր* մարդու և կ'ըսէ.

*«Ասոր համար ես կենդանի եմ, կ'ըսէ՛ Տէր Էփրայմ,
որովհետեւ դու ե՛րբ քուր զարշութիս ննկրուլդ ու
քուր պղծութիւններուլդ իմ սրբարանս պղծեցիր,
ես ալ անշուշտ ինձ պիտի կտորեմ, և իմ աչքս
պիտի չխնայէ ու պիտի չ'ողորմիմ» - Եզեկ. Ե. 11:*

Ուստանեկան և ընկերային իրենց ցեղայի՛ն մարզին մէջ միայն, հրեական իմացականութիւնը կ'ըմբռնէր աստուածային ողորմութիւնը: Մինչեւ մեր օրերը՝ քաներորդ դար, նոյնիսկ իրենց ազգային ընկերա-ֆաղափական փիլիսոփայութեան մէջ իսկ, Իսրայէլ երկրին վարչաձևեր չէ կրցած Յիսուս Զրիստոսի համամարդկային ողորմութիւնը ո՛չ ճանչնալ և ո՛չ ալ գործադրել:

Կ'արժէ՛ դիտել Յիսուս Զրիստոսի ողորմութիւնն ու գթութիւնը և բաղդատել զայն մարդկային ըմբռնումին հետ: Յիսուս՝ Իր աւետարանչական առաքելութեան շրջանին ֆարոգած էր երեւ օրեր ջարունակ, և բազմութիւնը Իրմէ չէր հեռացած: Յիսուս կ'ողորմի և կը գթայ ու կը փափափի կերակրել այդ անօթի բազմութիւնը: Յիսուսի ողորմութիւնը և զգայնութիւնը հանդէպ անօթի ժողովուրդին, միայն *տեսաբանական*, չէր, այլ՝ գործնական: Յիսուս տեսնելով և զգալով բազմութեան անօթութիւնը, Իր անապատային փորձառութեամբ, կ'ըսէ Իր աշակերտներուն.

«Կը գթամ այդ ժողովուրդին վրայ, վասնզի երեւ օրէ ի վեր ինչս են և ուտելիք չունին»:

Իսկ աշակերտները իրենք ալ գիտնալով ժողովուրդին ուժասպառ և անօթի ըլլալը, կը պատասխանեն Յիսուսի, (փաստաբանական և ոչ մարդկային ողորմածութեամբ).

«Ինչպէ՞ս կրնաս այս անապատին մէջ զանոնք կշտացնել»:

Ահաւասիկ աստուածայի՛ն սիրոյ անսակարկ ողորմութեան ու մարդկային *նկատողակա՛ն* ողորմութեան տարբերութիւնը: Աստուած կ'ողորմի մարդ արարածին ոչ թէ անոր խոստովանութենէն և ապաշխարութենէն յետոյ միայն, այլ՝ որովհետեւ Աստուած՝ Ի՛նք ամենողորմ և սիրող է, նոյնիսկ մեղաւորը: Մարդ *«արգանդածին»* է և աստուածային *մասնիկ*, մըն է: Աստուած կրնա՞յ մոռնալ Իր մէկ մասնիկը, Իր սիրական հոգեակը: Մարդ՝ այդ սիրոյ և ողորմութեան ձգողական զօրութենէն հմայուած, կը ստանայ

աստուածային թողութիւն իր մեղաց և բժշկութիւն իր հիւանդութեանց:

Կարդա՛նք միասին Եփես. Բ.4 համարը.

«Բայց Աստուած որ առատ է ողորմութեամբ, իր մեծ սիրով, որով սիրեց մեզ, մինչ մեռած էինք մեր մեղքերու և մէջ, մեզ կենդանացուց Հոյսատուով (որովհետեւ ջնարմով փրկկուեցանք): Անոր հետ յարութիւն տուաւ մեզի և անոր հետ նստեցուց երկնային տեղերու և մէջ՝ Հոյսատու Յիսուսով».

«Բայց դուք սիրեցէ՛ք ձեր թշնամիները և բարութիւնը ըրէ՛ք ձեզ ատողներուն ու փոխ տուէ՛ք անոնց, որոնցմէ ետ ստանալու ակնկալութիւն չուկիք: Եւ ձեր վարձքը ջատ պիտի ըլլայ, և դուք բարձրեացի ոյրքիներ պիտի ըլլաք, վասնզի ան բարեհաճ է չարերուն և անպարտիտներուն հանդէպ: Գթած եղէ՛ք, ինչպէս որ ձեր Հայրը գթած է»--
Ղուկ. Զ. 35-36:

Ահաւասիկ չափանիշ և հիմնաչափ պատուերն են որ Միածին Յիսուս կը պատուիրէ Իրեն հետեւողներուն: Այս է յաւերժական մեծութիւնը, այն ողորմութեան որ Աստուած կը ներգործէ Իրեն հաւատացողներուն մէջ: Այս անսահման գթութեան և ողորմութեան առջեւ՝ մարդ արարածը կը ծնրարդէ, կ'ապաշխարէ և կը նուիրէ ինքզինք երկնաւոր Հօր սիրոյն ու ջողակաթ կեանքին ըսելով.

«Տէ՛ր Ողորմեա»:

Ինչո՞ւ արդեօք աղերսարկու հեղինակը չորս անգամներ *«Տէ՛ր Ողորմեա»* կը կանչէ: Ծատ հաւանական է որ աղօթագիր բանաստեղծը կ'ուզէ ինքզինք մասնակից ընել համա-մարդկային ցեղին և յիշելու համար Հիւսիսային, Հարաւային, Արեւելեան և Արեւմտեան ժողովուրդները, իր խոստովանութեան մէջ չորս անգամներ կը կրկնէ *«Տէ՛ր Ողորմեա»:*

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԿՅՈՒՆ

Հին Կտակարանի մէջ, Եփովա Աստուած ճանչցուած էր որպէս Տէր, տիեզերքի, աշխարհի և մասնաշատուկ առնչութեամբ ալ հրեայ ժողովուրդին:

«*Երրորդութիւն*» բառը առաջին անգամ հնարուեցաւ Տէրսիւղիանոս աստուածաբանի կողմէ 160-220 թ.: «*Մուրք Երրորդութիւն*» անունը թէեւ ընդունուեցաւ Նիկիոյ Համաժողովին 325 թուականին, սակայն որպէս ուղղափառ վարդապետական արտայայտութիւն, վաւերացուեցաւ Կապադովկիացի երեք հայրապետներու ջանքերով (Բարսեղ, Գրիգոր Նիւսացի, և Գրիգոր Նազիանզացիի) կողմէն Կ. Պոլսոյ ժողովին, 382 թուին:

«*Մ. Երրորդութիւն*» բառին յօրինումին օժանդակած ըլլալ կը կարծուին Ս. Իգնատիոս՝ Անտիոքի երրորդ Եպիսկոպոսը, որ նահատակուեցաւ Տրաժան Կեսարի օրով: Ս. Երանոս՝ Լիոնի (Գաղիա) Եպիսկոպոսը (130 թ.), և աստուածաբան ու հռետոր Տէրսիւղիանոս՝ հիւսիսային Ափրիկէի ջատագովը (160 թ.) և Որոզինէս՝ ակադեմական իմաստասէրը, դաստիարակուած Աղեմ-սանդրիոյ Կղեմէս հայրապետի ջունչին տակ (175-251 թ.):

«*Մուրք Երրորդութիւն*» բառը, Յիսուս Քրիստոսի առաքեալները չեն յիշած: Ս. Աւետարաններուն մէջ չէ արձանագրուած: Եկեղեցւոյ սկզբնական դարերուն, այնպիսի՝ աղանդներ և թիւր վարդապետութիւններ հրապարակ ելան, որ Եպիսկոպոսներ ու եկեղեցական հայրապետները, պահպանելու համար Աւետարանի ուղղադաւան ճշմարտութիւնը, պարտաւորուեցան յօրինել «*Մ. Երրորդութիւն*» յաւելեալ որակումը, որպէս քիւրեղացեալ դաւանանք՝ Նոր Կտակարանի վարդապետութեան:

Տիեզերական Եկեղեցին յօրինեց «*Մուրք Երրորդութիւն*» որակումը, որպէս դաւանանք, Նոր Կտակարանի հետեւեալ վկայութիւններուն պատճառաւ.

1. «*Թէպէտ եւ կան ջնորհներու զանազանութիւններ, բայց Հոգին նոյնն է: Եթէ կան պաշտամունքի զանազանութիւններ, բայց Տէրը նոյնն է: Եթէ կան գործողութիւններու զանազանութիւններ, բայց նոյնն է Աստուած՝ որ կը գործէ ամէն բան ամենու և մէջ»*.-Ա. Կորնթ. ժԲ. 4-6:

Վերոյիշեալ համարներուն մէջ, Պօղոս առաքեալ առնչակից կ'ընէ «*Հոգի, Տէր*» և «*Աստուած*» անունները: Նոյն մտադրութեամբ և դիտաւորութեամբ ան կը գրէ նաեւ Եփեսացոց Եկեղեցիին, ըսելով.

2. «*Մէկ մարմին և մէկ հոգի. այնպէս ինչպէս կանչուեցաք ձեր կոչումի միակ յոյսին»:* *Մէկ Տէր* կայ, *մէկ հաստ»:* մէկ

մկրտութիւն, *մէկ Աստուած՝* Հայր ամենուն որ է ամենուն վրայ, ամենուն հետ և մեր ամենուն մէջ»--Եփես. Գ. 4-6:

Նոյն ըմբռնումի կապակցութիւնը, Պօղոս առաքեալ կը շարունակէ նաեւ, Բ Կորնթ. ԺԳ. 13 համարին մէջ ըսելով.

3. *«Անք Տէր Յիսուս Բրիստոսի ջնոյմը, Աստուծոյ սէրը, և Առքը Հոգւոյն հաղորդութիւնը թող ըլլան ձեր ամենուն հետ».*

Յիսուս Բրիստոս՝ Իր աշակերտները մեծ առաքելութեան դրկած պահուն, կը պատուիրէ անոնց ըսելով.

4. *«Գացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձուցէ՛ք բոլոր ազգերը, Մկրտեցէ՛ք զանոնք՝ Հօր և Որդիին և Առքը Հոգիին անունով»* --Մատթ. ԻԸ.19:

Ափրիկեցի Ս. Օգոստինոս՝ աստուածաբան, հոնտոր և Եկեղեցական վարդապետութիւններու մեծագոյն հիմնադիրը, "Ս. Երրորդութիւն"ը կ'ըմբռնէ և կը նկարագրէ հետեւեալ կերպով.

«Բանը կամ Որդին յաւերժօրէն իմացակա՛ն ծննդագործումն է Հօր Աստուծոյ, և Առքը Հոգին՝ մշտնջենապէս կը բխի որպէս "Սէր" աստուածային բարի Կամօով»:

Յիսուսի յայտնութեամբ և առաքելութեամբ, առաքեալներն ու Յիսուսի հետեւորդները Զինք "Տէր" կոչեցին: Պենտեկոստէի օրը՝ Միսիթարիչը, որպէս հրեղէն Առքը Հոգի, ջարժման մէջ դրա Յիսուսի Եկեղեցին՝ Անոր սրբացուցիչ Մարմինը:

Ս. Օգոստինոս Չորրորդ դարուն, իր բազմապատակ և հարուստ մատենագրութեան մէջ երկար բացատրականը կը գրէ Ս. Երրորդութեան: Ինչպէս ամէն միտք մաթեմատիկական ըմբռնում չունի, կամ վերացական գիտութեան հասկացողութիւնը կը պակսի (կը գրեմ առանց մէկը նուաստացնելու մտօք), նոյնպէս ամէն անձի տրուած չէ լման ըմբռնել զԱստուած, Ս. Երրորդութիւն, Ս. Հոգի կամ Յիսուս Բրիստոս՝ Որդին Աստուծոյ:

Աստուած հոգիով ըմբռնելի է, որովհետեւ աննիւթական իսկութիւն է Ան: Մարդկային միտքը՝ իր նիւթական կաշկանդումներուն պատճառաւ, միայն կրնայ մօտենալ ու **հաւատի՛**

աչֆերով հասկնալ զԱստուած: Մարդ արարածը՝ իր մարմնաւորութեան պատճառաւ կը ջանայ բացատրել զԱստուած: Որովհետեւ մարդկային բացատրութիւնը միայն նիւթականը, սահմանաւորը և կանոնադրականը կ'ըմբռնէ, աստուածաբաններ կը ջանան լուսաբանութիւն մը տալ տիեզերքի Արարիչ Աստուծոյ:

Նախաֆրիստոնէական մեհեանները ֆանդակած են մարդակերպ և անասնակերպար կուրֆեր և բազիններ կրակի և աստուածուհիներու: Իսրայէլ ազգը կառուցած է Սողոմոնի տաճարը իր Սուրբ Սրբոցով Երուսաղէմի մէջ ու սամարացիք կանգնած էին իրենց տաճարը Գորազին լեռան գագաթը:

Աստուածառաֆ Յիսուս Քրիստոս տեսնելով համայն մարդկութեան, Աստուած ճանչնալու և բացատրելու դժուարութիւնը, ըսաւ անոնց.

«Հաւատա՛ ինձի, որ պիտի գայ ժամանակ, երբ ո՛չ այս լեռան վրայ և ո՛չ ալ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընեն ձօրը: Դուք երկրպագութիւն կ'ընէք անոր զոր չէք ճանչնար, իսկ մենք երկրպագութիւն կ'ընենք անոր զոր կը ճանչնանք...: Բայց պիտի գայ ժամանակ, և արդէն եկած է, երբ ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն ձօրը՝ հոգիով և ճշմարտութեամբ»--Յով. Դ. 12-25:

«Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած քան թէ բացատրել Ձինք, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Ձինք»:

Մարդիկ դժուարութիւն ունին, նոյնիսկ հասկնալու *հրեմի գիրքով*: Պարտադրութիւն չկայ, գործածելու որեւէ բառ, անուն կամ սահմանում երբ անձ մը անկեղծութեամբ և խոնարհութեամբ կ'աղօթէ և կը պաշտէ զԱստուած ճշմարտութեամբ և արդարութեամբ--Հոգիով: Նոյնիսկ կարելի է հաղորդուիլ և հասկցուիլ իրարու հետ անձայն կամ անբարբառ:

ՏՈՒՐ ԱՇԽԱՐՀԻՍ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

"Տուր" բառը, այս աղերսին մէջ, *հրաւիրակաւ*, չէ, այլ *աղաջակաւ*: Որովհետեւ այս աղօթք աղերսը աշխարհի՛ խաղաղութեան համար է:

Անցեալին կամ ներկային մէջ, աշխարհը ե՞րբ խաղաղութիւն ունեցած է: Թերեւս կարգ մը երկիրներ՝ ժամանակաւոր խաղա-

դութիւն վայելած են, սակայն աշխարհ, որպէս լման երկրագունտ, ամբողջական և միաժամանակ, խաղաղութիւն երբեք չէ տեսած:

Պատմագէտներ կը կարծեն, որ մարդկութիւնը ցարդ ունեցած է 15,000 պատերազմներ, որոնց պատմագրական արձանագրութիւնները ապացուցանելի են: Քսաներորդ Դարու մէջ պատահած պատերազմներու եղեոն ու սպանողը կը հասնի մօտ 100 միլիոնի:

Յաւալին ու միեւնոյն ժամանակ հեզնականը այն է, որ մարդկութիւնը որքան յառաջդիմած է *բնական* գիտութեան, Բաղաճակրթութեան և օրէնսդրական գիտութիւններու մէջ, այնքան աւելի ահաւոր դարձած է անոր սպանողը, եղեոնը և թշուառութիւնը:

Աղերսող երկրագուն՝ իր մարգարեաշունչ ներատեսութեամբ կը գուշակէ, որ աշխարհիս խաղաղութիւնը կարելի պիտի ըլլայ միայն Աստուծոյ միջամտութեամբ: Որուն աւետիսը յայտնած էր Յիսուս Քրիստոս Բարոզելով *«Աստուծոյ Թագաւորութիւն»* յուսադրիչ Աւետալուրը:

Աշխարհ փորձեց Աւտապետական դրութիւնը, Բոնակալական միահեծան իշխանութիւնը, Ազնուապետական վարչաձեւը, Ռամկավար և Համայնավար կառավարութիւնները, սակայն այս բոլոր "ութիւն"-ները խաղաղութիւն չկրցան պարգեւել աշխարհի ժողովուրդներուն:

«Տէ՛ր Աղոյմ՛եա» աղօթքին յատկանիշը, ոչ թէ խաղաղութիւն խնդրել է, այլ՝ *հաւ՛ա՛յն* աշխարհի համար խաղաղութիւն հայցել է: Աշխարհի մեծ և գօրեղ ազգերը խաղաղութիւն կը ճառեն, ու կը բարբառեն, սակայն ո՛չ թէ *իրաւունքի՛* և *արդարութեան՛* միջոցաւ համաշխարհի՛ խաղաղութիւնը կը ջատագովեն, այլ՝ իրենց գերեվարութիւնը յաւերժացնող *կե՛րքծ* խաղաղութիւն:

Ո՞ր ազգը իր ջանք զոհած է արդեօք համամարդկային խաղաղութեան համար: Մնրադիր աղաչականը չ'ըսէր, տուր "ազգիս հայոց" խաղաղութիւն, այլ՝ *«աշխարհի՛»* խաղաղութիւն: Հեռատես, իրատես և հաւատացեալ հայ ազգը ջատ լաւ գիտէր, որ առանց *աշխարհի՛* խաղաղութեան, որեւէ ազգ խաղաղութիւն չի կրնար ունենալ: Երանի՛ թէ "մեծ" կարծուած ազգեր՝ հայ հաւատաւորներու մարգարեատես հմտութիւնը ունենային:

Խաղաղութիւն բարը, որ եբրայերէն *«Շալու՛»* և Արաբերէն *«Սալալ՛»* կը նշանակէ, աւելի խորիմաստ է քան յունարէն *«բրինի՛»* բարը: Եբրայերէն բարը կը նշանակէ *հաւ՛ա՛յն* խաղաղութիւն՝ անձնական, ընտանեկան, ընկերային և Բաղաճական. արողջութիւն, յաջողութիւն, ապահովութիւն, մարմնական կամ հոգեմը-

տաւորական: Իսկ յունարէն *“խաղաղութեան”* ըմբռնումը թշնամութեան և պատերազմող ուժերու *“զինադարար”*ը կը նշանակէ:

Մեր Տէր Յիսուսի և Ձինք յաջորդող առաքելներուն գործածած *խաղաղութիւն* բառը՝ շատ աւելի իմաստալից և յատկանշական էր, որովհետեւ Յիսուս Զրիստոս, խաղաղութիւն բառը գործածեց հրէական պատկերացումով և խորհրդանշական իմաստներով: Ուստի, Յիսուս և թէ Ձինք սիրող ուխտաւորները գործածեցին *“խաղաղութիւն ձեզ”* բառերը՝ որպէս *“ողջոյն”*ի նշանակ:

Այս *“խաղաղութիւն ձեզ”*ը Բաղաճակարական սովորութիւն մը էր Յիսուսի համար: Կարդանք միասին Աւետարան ըստ Մատթէոսի Ժ. 13 համարը.

«Էրբ տու նր մտնե՛ք՝ ողջոյն տուե՛ք անոյ (և ըսե՛ք՝ խաղաղութիւն այս տանը), եթէ տու նր արժանի է՝ ձեք խաղաղութիւնը թող անոյ վրայ հանգչի, իսկ եթէ արժանի չէ՝ ձեք խաղաղութիւնը թող ձեզի դատնայ».

Առաքելական և Զրիստոսահաւատ ողջոյնի խաղաղութեան բաղձանք մը իր մէջ կը պարունակէ խորհրդապաշտ գօրութիւն: Բարի և անկեղծ կամեցողութիւն մը, որ կը հաւասարի օրհնութեան և մաղթանքի, ու կարելիութիւնը ունի շօշափելիի և մարմնականի վերածուելու: Այս պատճառաւ հոգեւորականներ կ'օրհնեն բարերարներու և մարդասէրներու ձեռնարկները: Այս իմաստով հայր մը կամ մայր մը կ'օրհնէ իր ծննդագործած հարազատները և անոնց կը մաղթէ առողջութիւն և յաջողութիւն:

Խաղաղութեան Իշխան՝ Յիսուս երբ *“խաղաղութեան”* մասին ճառեց, ըսաւ.

«Խաղաղութիւն կը թողու՛մ ձեզի, Ի՛նչ խաղաղութիւն կը տամ ձեզի. ձեզի չեմ տար այնպէս, ինչպէս այս աշխարհը կը տայ. թող չխտովին ձեք սրտերը և չվախնան»—Յով. ԺԴ. 27:

Յիսուս Զրիստոսի *“խաղաղութիւն”*ը ունի առաւել ստուգաբանութիւն մը: Ան կ'ըսէ. *“Ի՛նչ խաղաղութիւնս”*:

Բարութիւնը մարմնացնող Իսկութիւնը՝ Իր աշակերտներուն կը շնորհէ *“Ի՛ր”* խաղաղութիւնը: Ոչ թէ աղմուկի բացակայութիւնը կամ շարժման դադարումը, այլ խոովութեան և յուզմունքի բացակայութիւնը, հոգւոյ անդորրութիւնը և հանգստութիւնը:

20-րդ դարու Արեւմտեան Բաղաճակարկութիւնը մոռցած է, որ

հնագոյն անցեալի մարդկութիւնը կը տառապէր մեղքի մեղան-
չումէն և կը վախնա՛ր պատժարա՛ր Աստուծմէ: Մարդեղեալ
Միածինը՝ Իր Անձին և ապրումին միջոցաւ ցոյց տուաւ Աստուծոյ
սիրոյ Դիմագիծը և հաշտեցուց մարդը Աստուծոյ հետ: Աստ-
ւածային ներողամտութեան շնորհը հաւատացեալին կը պարգեւէ
մշտաշող խաղաղութիւն:

Եթէ մաղթանքի կամ ողջոյնի մէջ նուիրական և խորհրդա-
պաշտական իրողութիւն կամ ուժգնութիւն չըլլար, Յիսուս պիտի
չ՛ապսպրէր որ անարժան անձի մը ուղղուած խաղաղութեան
ողջոյնը վերադառնայ մաղթող անձին:

ԵՒ ՅԻՒԱՆԴԱՅ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Հիւանդութեան սկզբնապատճառը՝ Հին Կտակարանը կը
վերագրէ աստուածային բարկութեան կամ պատիժի.

*«Եւ Աստուած ըսաւ Մովսէսի. Ը՛վ տուաւ մարդուն
բերան. կամ ո՞վ ըրաւ համրը կամ խուլը կամ աչք
ու նեցողը կամ կոյրը. չէ՞ որ ես Տէրաւ»* --Ելից Դ.11:

Այս պատճառաւ Հրեաները կ'արհամարհէին և կ'անջատէին
արատաւոր անձերը, բորոտները, կաղերը և կոյրերը: Մարմնա-
կան անդամէ որեւէ պակասաւոր կամ այլանդակ անձ մը կ'արգիլ-
ուէր Բահանայական պաշտօնէն:

Հրեաները՝ որովհետեւ կրկնապաշտ (dualist) չէին, հիւան-
դութեան ախտաբանութիւնը Սատանային չեն վերագրած ինչպէս
Զրադաշտական կրօնքը կը պատուիրէ: Հետեւաբար քրիստոնէու-
թեան մէջ ներմուծուեցաւ հրեական գաղափարը, թէ Աստուած
հիւանդութեամբ և ձախորդութեամբ կը *պատժէ* մեղաւորը, ինչպէս
մեզմէ ոմանք սովորութիւնը ունին ըսելու.

«Աստուծմէ գտնես պէլաթ»:

Հրեական ըմբռնումով մարդկային կեանքը՝ իր ամբողջակա՛ն
ապրումով կ'արժեւորուէր: Այլ խօսքով, մարմնական, հոգեկան և
ունեւորութեան վիճակը, մարդը կը պատկերէր որպէս կատարեալ,
անթերի և լման՝ ինչպէս Յոք Երանելին:

Հրեական "ծալում" բառը, որ խաղաղութիւն կը նշանակէ, ունի

նաեւ ջաշխ՛: Արաբերէն «նաշխ՛»: որ կը նշանակէ "լման", անթերի՝ չկտորուած: Խաղաղութիւն և անթերրութիւն Մեմական լեզուի բաները իրարու հետ յարաբերական են:

Հրեութեան համար, ախտածին մը *արհամարհան՛ուլ* կը դիտուէր: Յիսուսի մօտեցումը անոր հանդէպ, եղաւ *գթութեամբ* և կարեկցութեամբ, բոլոր մարմնական և հոգեւոր տկարներուն, դիւահարին և դիւրաբեկին: Որովհետեւ Յիսուս չէր հաւատար որ ախտաւորները աստուածային *պատիժի* ենթարկուած յանցաւորներ են:

Յիսուս Քրիստոսի ցոյց տուած ըմբռնումը և մօտեցումը հանդէպ ախտաբանութեան և հիւանդութեան, ունէր *ողորմած* տեսութիւն մը: Կասկած չկայ որ Յիսուս կը դիտէր հիւանդութիւնը և ցաւը որպէս *չարի՛ն* բացորոշ մէկ միջամտութիւնը, մարդկային *ամբողջակա՛ն* փորձառութեանը մէջ: Ինչպէս Անոր ամենամօտ և սիրելի ճանչցուած Առաքեալը կը գրէ Ա. Յով. 4.8-9 համարներուն մէջ.

«Ով որ մեղք կը գործէ՝ Մատանայէն է, քանի որ Մատանան մեղանչող է ի սկզբանէ: Աստուծոյ Որդին յայտնուեցաւ անոր համար որ քանիչ Մատանային գործերը».

Յիսուս Քրիստոս չ'արհամարհե՛ց և նուաստօրէն չդիտեց ախտաւոր մը կամ հիւանդ մը, այլ՝ *դպա՛ւ* բորոտներուն և բժշկեց զանոնք: *Ձեռք՝ երկայրեց* մեռածներուն և Իր սիրոյ լուսեղէն Ձեռքերով վերականգնեց չարէն հարուածեալները և արկածեալները:

Անստուեր Լոյս Յիսուս մերժեց նաեւ յունական տեսաբանութիւնը, թէ մարմինը վանդակաբանտ մըն է հոգիին: Այս տեսութիւնը Տէքարդի միջոցաւ ընդհանրացաւ քրիստոնէական գաղափարաբանութեան մէջ: Յիսուսի համար մարմնականն ու հոգեկանը յարաբերական էին և իրարու համադրական: Որովհետեւ կարգ մը ախտաւորները բժշկելէ առաջ, լուսայորդ Յիսուս, անոնց մեղքերուն թողութիւն շնորհեց:

Լոյսեր հազած գալիլեացին՝ Իր Անձին և ապրումին միջոցաւ ցոյց տուաւ Աստուծոյ սիրոյ Դիմագիծը և հիմնական կէտանիշը, որ Աստուած՝ Իր ծրագիր կանոնագրին մէջ տեղ չ'ունի՝ հիւանդութեան կամ ախտագոյութեան:

Ներկայ բժշկութիւնը կը խոնարհի և կը հաւատայ թէ յաճախ մարմնական հիւանդութիւններու սկզբնապատճառը «ես»ին կամակորութիւնն է և «անձ»ին ազահութիւնը: Մարդկային անձնականութիւնը այնքա՛ն փոքուն դարձած է, որ նոյնիսկ ի՛ր բջիջները

ըմբոստացած են իր էութեան դեմ: Ներկայ հիւանդութիւնները մարմնակա՛ն և հոգեկան, անձնասիրութեան և անձնապաշտութեան ախտանիշներն են:

Յիսուս բացորոշ կերպով ցուցադրեց աստուածային միասնիկ պրպտումներու ոլորտը, բժշկելով քուսացած ձեռք մը նոյնիսկ Շաբաթօրը.

«Իսկ սա Աքրահամի դուտորն էր, զոր անա Աստանան տանում թ տարիէ ի վեր կապած էր. պէտք չէ՞ որ Շաբաթօրով արձակու էր իր կապանքներէն».

Յիսուս աշխարհ եկած էր թէ՛ չարին ծուղակները փակելու և թէ չարը նուաճելու, ու երբեք առիթը չփախցուց բուժելու հիւանդները և արձակելու չարին կողմէ կապուածները: Յիսուս գիտնալով չարին փորձութեան տանող ճամբան, որ ներքնազոյն «ես»ին *անձնասիրակա՛ն*, մտածումով մուտքն է, ջանաց որպէս Մեծ Հոգեբոյժ, դաստիարակել Իրեն հետեւողները Լերան Բարոզներով: Ներկայ հոգեբուժական և հոգեբանական դաստիարակչութեան հիմքը կը կազմէ Յիսուս Բրիստոսի երկու հազար տարի առաջ արտասանած «Լերան Բարոզ»ները:

Հին Կռակարանի քանի մը մարգարէներէն գատ, ուրիշ կրօններու մէջ չենք հանդիպիր հրաջագործ բժշկութիւններու: Յիսուսի և Իրեն յաջորդող առաքեալներուն հրաջագործ բժշկութիւնները հիմնաքարերը կը կազմեն Բրիստոնէութեան արագօրէն տարածուելուն: Տրդատ Թագաւորին հիւանդութեան բժշկութիւնը, Լուսաւորչի ձեռամբ, պատճառ եղաւ, որ Հայ ժողովուրդը դառնայ Յիսուս Բրիստոսի Լոյս Հաւատքին:

Հիւանդութիւններ բժշկելը, թէեւ հաւատքի հետ առնչութիւն ունի, սակայն միայն հաւատքով չգործադրուիր: Հիւանդութիւն բժշկելը հաւատքին վրայ առաւել ըլլալով ներուժ գորութիւն մը եւս կը կարօտի, որ աստուածային շնորհ մըն է սրուած կարգ մը անձերու:

«Թէպէտ եւ կան շնորհներու զանազանութիւններ, բայց Հոգին Հոգին նոյնն է... մէկուն՝ հոգիէն սրուած է իմաստութեան խօսք, միւսին՝ գիտութեան խօսք, ...միւսին՝ բժշկութիւններու շնորհ՝ նոյն Հոգիով, միւսին՝ զօրաւոր գործերու կարողութիւններ»--Ա. Կորնթ. ԺԲ. 8-9:

Աստուածայայտնիչ Վարդապետ Յիսուս, որքան որ բուժեց

մարմնական հիւանդութիւնները, նոյնքան ալ Իր բուժիչ զօրութիւնը յայտնեց հոգեբուժական առիթներով: Ան բուժեց մոլեռանդ և ընչաքաղց Ջաֆէոսը և զայն դարձուց առատաձեռն ու կարեկից: Իր հոգեբոյժ զօրութեամբ Ան դարձի բերաւ Մատթէոս մաքսաւորը և զայն ըրաւ Աւետարանագիր առաքեալ: Որպէս Հոգեբոյժ՝ Յիսուս մեծ իմաստութեամբ խօսակցութեան հրաւիրեց Մամարացի կինը, վերլուծեց անոր ազատասեռ կենակցութիւնը, հաւատփի առաջնորդեց զայն և Մամարիոյ աւետարանիչը դարձուց:

"Տէ՛ր Ողորմեա" աղօթփի բժշկութեան այս աղերսը, ջատ զօրաւոր ոյժ կը պարունակէ ինքն իր մէջ, որովհետեւ հեղինակը ոչ թէ միայն մտածումով գրական բանահիւսութիւն մը յօրինած է, այլ՝ հաւատփի մարգարէաշունչ հոգիով երկնասլաց աղերս երաժըշտութիւն ստեղծած է իր հաւատակիցներու բժշկութեան համար:

Արդի բժշկութիւնը, որ հիւանդութիւնները միայն մակաբուժական ախտաբանութիւն կը սեպէր, ներկայիս վերատեսութեան ենթարկած է իր նկատառումը հանդէպ ախտաբանութեան: Եթէ տիեզերք՝ իր բոլոր եղելութեամբ ենթակայ է Աստուծոյ, ինչո՞ւ մակաբուժական (parasitic) գոյութիւնը եւս չ'ենթարկուի աստուածային Իշխանութեան:

Անմահութեան Դեղ Յիսուս՝ Իր բարութեան մարմնացեալ Անհատականութեամբ հրաշագեղ անկիւնադարձ մը կերտեց հաւատփի գերհզօր ներգործութեամբ և ժամանակաւորը կամրջեց յաւիտենականին հետ:

Յոյսի և գոյատեւման Աղբիւրը՝ Իր հրաշագործող ապրումով ցոյց տուաւ, որ Աստուած *ստեղծագործելո՞ւ* կը բժշկէ հիւանդութիւնները, այսինքն, ինչ որ մակաբոյժ մանրէները սպաննած կամ ոչնչացուցած են, Աստուած կը յարուցանէ զանոնք կամ նորերը կը ստեղծէ և հիւանդը կ'առողջանայ: Աստուածային ստեղծագործ ներկայութեան՝ մակաբոյժ մանրէները կ'անյայտանան:

ՆՆՋԵՑԵԼՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

Մարդ արարած յաւերժօրէն ընդվզած է մահուան դէմ: Զաղափակրթեալ և իմաստաւորեալ մշակոյթներ մերժած են ճանչնալ մահուան համատարած իշխանութիւնը և առաջադրած են անմահութեան յոյսը, ուր մարդ պիտի ապրի ազատ ու անկախ մահուան սպառնացող վտանգէն:

Զինաստանի Կոնփիկիոս դաստիարակը՝ միակ բարոյախօս

իմաստասերն է պատմութեան մէջ, որ ընդունած էր "բարի մահուան" մակաբերութիւնը երբ մարդ գոհունակութեամբ և բերկրութեամբ ապրել է վերջ կը մահանայ:

Նախամարդկային մտածողութեան մէջ, հիւանդութիւնն ու անոր հետեւող մահը անընդունելի էր մարդկային կենցաղագիտութեան: Անոնք մահը վերագրեցին նախամարդուն սխալանքին, անհնազանդութեան կամ անհոգութեան: Ընդհանրապէս իգական սեռը կը մեղադրուէր վերոյիջեալ անփթութեան համար: Կարգ մը մահեր կը վերագրուէին բնութեան անողոք վայրագութեան՝ ինչպէս կայծակներու, հեղեղներու և երկրաջարժութիւններու: Իսկ աւելի խորհրդաւոր մահերը՝ արդիւնք կը նկատուէին կախարդութեան և հմայութեան:

Տուրտ մահուան խորհրդագագց դէպք ներկայութեան, մարդ արարած ջիոթահար և ապշահար, այնպէս կը կարծէր, որ մեռնող անձին հոգին, որպէս աներեւոյթ անձնաւորութիւն մը ներկայ է իր դիակին բով: Հետեւաբար սովորութիւն դարձաւ, գերեզման տանիլ ու տեստեղէններ և ջանալ հարցազրոյց ունենալ մեռելներու ոգիներուն հետ:

Թիպէթի կրօնաւոր Լամաներ, մեռնող անձին մարմինէն դուրս կը բաշեն անոր հոգին, անմիջապէս որ մեռնի, ու կ'առաջնորդեն զայն դէպի հանգստութիւն: Իսլամ հաւատացեալի մը մահուան արթիւ, արօթող "իմամը" իրատ և հրահանգ կու տայ մեռնողին թէ ի՞նչ պատասխան պիտի տայ զինք բննող հրեշտակներու հարցումներուն, որպէս ապահովութիւն իր երկնային ճամբորդութեան համար:

Արեւելեան տարբեր կրօններու մէջ սովորութիւն էր թաղել մեռելին հետ (եթէ իջիանական անձն մըն էր) իր կիները, իր սպասաւորները իր նախասիրած ձին և ջունը: Տարիներ յետոյ վերոյիջեալ վայրագ և տմարդի սովորութիւնը փոխարինուեցաւ թաղելով նմանութիւններ կամ պատկերներ որոնք կը ներկայացնեն իրենց կիներն ու նախասիրածները:

Հին Կտակարանին մէջ "մահ"ը, թէեւ անվերադարձ մէկ ուղղութեամբ ճանապարհ մը ճանչցուած էր, սակայն կարգ մը անձերու հոգիները կը կանչուէին "խորհրդակցութեան" համար: Օրինակ.

«Ու կինը Սաւուղի ըսաւ, գետնէն ելլող աստուածներ տեսայ: Եւ Սաւուղ անոր ըսաւ, անոր կերպարանքը ինչպէ՞ս է: Ու կինը ըսաւ, ահա ծեր մարդ մը կ'ելլէ, ու վերարկու մը

հագած է: Եւ Մաւուդ հասկցաւ որ անիկա Մամուէլն է,--Ա.
Թագ. ԻԸ. 13-14:

Վերոյիշեալ "աստուածներ" բառը "Լոհիմ" կը հնչուի Եբր.-ով
որ կը նշանակէ *սանդարա/հետական* անդրջիրիմեան այցելուներ
դէպի աշխարհ:

Հին Կտակարանի անդրջիրիմեան մտածողութիւնը՝ զուգահեռ
է Միջին Արեւելի ժողովուրդներու մտաւորումներուն առանց
որեւէ նոր կամ ուրոյն լուսաբանութիւններու: Հին Կտակարանի
գրութիւններուն մէջ, բնաւ չենք հանդիպիր մեռելներու բնակարան
"դժոխք" բառին, որ տանջանքի և պատիժի վայր կը նշանակէ:
Հրեայ ուսմանական մտածողութիւնը "դժոխք"ը, որպէս տան-
ջավայր ընդունած է մեռելներու անդենական վիճակին համար, մի
միայն *Հելլենական արջաւանքէն յետոյ*: Բարեկունէ վերադառնալէ
վերջ Հրեաները կցեցին "դժոխք" բառը որպէս տանջավայր ու
դատապարտութիւն իրենց վարդապետութեան: Այս տանջանք նշա-
նակութիւնը, հրեաները ստացան պարսիկներէն: "Դժոխք" բառը,
որպէս չարչարանքի և տանջանքի վայր մը, ընդհանրացաւ Զրիս-
տունէական դաւանանքին մէջ, Իտալացի Տանթէ (1265-1321) բանաս-
տեղծի "Աստուածային Կատակերգութիւն" հրատարակութենէ վերջ:

Վերոյիշեալ պատճառաւ է, որ միայն Փարիսեցիական աղանդը
կը հաւատար դժոխքի պատիժներուն, իսկ Մարուկեցի աղանդը
մերժած էր սոյն դաւանանքը ներմուծել Մովսիսական ուղղադա-
ւանութեան, որովհետեւ Հին Կտակարանը լուռ է այդ մասին:

Նոր Կտակարանը եւս, իր առաքելաշունչ և սրբազան գրակա-
նութեամբ լուռ է մեռելներու վիճակով: Անդենականի մասին
եղած բոլոր ակնարկութիւնները թէ՛ քիչ են և թէ ջփոթեցուցիչ:
Յիսուս Զրիստոս, մեռելները կոչած է "ննջեցեալներ":

1. Տայրոսի աղջկան յարութեան ընթացքին Յիսուսի արտայայ-
տութիւնը եղաւ.

«Յիսուս իշխանաւորին տունը եկաւ և տեսաւ փողահարներն
ու մեծ ամբոխ մը, ըսաւ անոնց. հեռու՛ գացէ՛ք, որովհետեւ
այդ աղջիկը ոչ թէ մեռած է, այլ կը բնանայ»--Մատթ.Թ.23:

2. Ղազարոսի Յարութիւնը՝ Յիսուս այսպէս կ'իմացնէ Իր աշա-
ւջակերտներուն.

«Մեր բարեկամը՝ Ղազարոս, ննջեր է, սակայն երթամ
արթնցնեմ զայն: Աջակերտները ըսին անոր. Տէ՛ր եթէ
ննջեր է՝ ուրեմն կ'արողջանայ: Բայց Յիսուս անոր մահ-

ւան կ'ակնարկէր...»--Յով. ԺԱ. 11-13:

Մի միայն "Աղբատ Ղազարոսի Առակին" մէջ, Յիսուս թէ Ղազարոսին և թէ մեծատունին համար *"Մեռաւ"* բառը գործածած է:

Յիսուս Զրիստոսի կեդրոնական պատգամն էր *"Կեանք"* և առաւել կեանք, որուն առանցքը կազմող ճշմարտութիւնը՝ *Մեռելներու Յարութիւնն*, էր: Ան յայտարարեց ըսելով.

«Ես իսկ եմ Յարութիւն և Կեանք. ով որ կը հաւատայ Ինձի, թէպէտ մեռնի ալ, պիտի ապրի»
--Յով. ԺԱ. 25:

Երկնառաք Վարդապետին յաջորդներն ալ քարոզեցին իրենց «Տէր Յիսուսը և Անոր Յարութիւնը».

«Պաշտոն կ'աւետարանէր Յիսուսը և Յարութիւնը»
--Առաք. ԺԷ. 18:

Զրիստոնէական հաւատքի գօրութիւնը՝ տեսաբանական և իմաստասիրական ճառախօսութիւն մը չէ, այլ իրական դէպք պատահարի մը և աստուածային շնորհին ձրի պարգեւն է: Մարդկային հոգեկան ձգտումին և անոր մտորումի խոյանքին յագեցումն է ան: Մեռելներու Յարութեան անսասան հաւատքին համար՝ նահատակութիւնը չսարսուացուց սուրբերն ու հաւատացեալները: Մեր Տիրոջ պանծալի և անպարտելի Յաղթութիւնը՝ մահուան և գերեզմանին վրայ, սարսեց համայն աշխարհը և անոր արձագանգը լսելի է նոյնիսկ քան դարեր ետք:

Վերոյիջեալ յաղթապանծ Յարութեան հաւատքի աղերսարկուն կ'ըսէ.

«Տէր ողորմեա, ննջեցելոց Արքայութիւն»:

Պաղատող խնդրարկուն, ոչ թէ կը բարեխօսէ, այլ՝ իր անսասան հաւատքը կը յայտնէ հաւատացեալ ննջեցելոց յարութեան: Աղօթող սուրբը գիտէ՝ որ անոնք մեռեալներ չեն, այլ միայն ննջեցեալներ: Սոյն խնդրանքը բարեխօսութիւն չէ որ ննջեցեալները փոխադրուին դժոխքէն երկինք, նման մեծատունին փափաքին "աղբատ Ղազարոսի Առակ"ին մէջ, այլ *մաղթա՛նք* մըն է որ իր ննջեցեալ հաւատակիցները արժանանան խոստացեալ երանելի Արքայութեան, ուր անցեալի բոլոր սուրբերը և նահատակները կարենան միասին փառաբանել զԱստուած: Յիսուս Զրիստոս խոստացաւ Իրեն հետեւողներուն ըսելով.

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք որ եկեաք իմ ետեւէս,

*երկրորդ գալստեան, երբ մարդու Որդին նստի իր աթոռին վրայ, որո՞ւ ալ պիտի նստի՞ տասներկու աթոռներու վրայ)... Եւ անէն ո՞ր որ ձգեց տուն կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ազարակներ՝ իմ անուանս հա՛մար, հարիւրապատիկ պիտի ստանայ և յախճենական կեանք պիտի ժառանգէ»--
Մատթ.ԺԹ. 28-29:*

«*Ննջեցելոց Արժայութիւն»* ոճը՝ անսասան հաւատքի, խոր համոզումի և աներեր վստահութեան երաշխիքն է փորձառական հաւատացեալին համար:

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Աջխարհի խաղաղութիւն ու հիւանդաց բժշկութիւն խնդրել է ետք, մարգարէաշունչ աղերսագիրը, անհամեմատ հորիզոնով և խորացումով, աստուածային այցելութիւն կը խնդրէ Հայ Ազգին ուխտաւոր և հաւատաւոր ժողովուրդին, որպէսզի երկնային մտերմութիւն մը ստեղծուի Աստուծոյ և իր ազգին միջեւ:

Անժամանցելիին ներկայութիւնը՝ երկրիմի ըմբոնում ստեղծած էր Հին Կտակարանի մարգարէներուն մտքին մէջ: Ըստ ոմանց հասկացողութեան, աստուածային այցելութիւնը կրնար թէ՛ *ժխտական* և թէ՛ ալ *դրական* ըլլալ: Աստուած՝ Իր այցելութեան ընթացքին եթէ բարկանար, կոտորած կը դրկէր Իր ժողովուրդին.

*«Աստի Տէրը լսեց ու բարկացաւ.
Եւ կրակ բորբոքեցաւ Յակոբի մէջ.
Ու նաեւ բարկութիւն ելաւ Իսրայէլի վրայ.
Վասնզի Աստուծոյ չհաւատացին,
Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ,
Ու սպաննեց անոնց պարտաներէն.
Ու գետինը զարկաւ անոնց ընտիրները:
Ու նայնութեան մէջ սպառեց անոնց օրերը
Եւ ահի մէջ՝ անոնց տարիները»:*

--Սաղմոս ՀԸ. 21-22, 31-33:

Յիսուս կ'ողբայ Երուսաղէմ քաղաքին վրայ, որ աստուածային այցելութիւնը չ'ընդունեց և չի հասկցաւ.

«Հիմնայառակ պիտի ընեն բեզ ու բու մէջդ բու որդիներդ. և բար բարի վրայ բնաւ պիտի չձգեն

**Բու մէջդ, Բանի որ չգիտցար Բու այցելու-
թեանդ ժամանակը» --Ղուկ. ԺԹ. 44:**

Խաչի՛ ճանապարհին, մեր Տէրը ոչ թէ կ'անիծէ Երուսաղէմ
ֆաղաֆը՝ իր բնակիչներով, այլ՝ կը *կանխաձայնէ* գալիք կոտորածը, որ եթէ կարելի է գէթ մ'նացորդ մը հաւատայ Իրեն և փախչի:
Գալիլեացի Մարգարէն ոչ թէ կը նզովէ Երուսաղէմն ու տաճարը,
այլ *կր լայ* անոր վրայ: Ան կը կարեկցի՛ և կը ջանայ բաժնեկցիլ
անոնց ահաւոր եղեռնին:

Կարգ մը ընտանիքներ այցելութեան օր ունին երբ
ազգականներ և բարեկամներ ժամանակ առ ժամանակ կը հաւաք-
ւին ու գիրար կը վայելեն: Համաշխարհային ֆաղափական հար-
ցերու համար ալ ջատ մը ֆաղափական մեծաւորներ, երբեմն երբեմն
կը հաւաքուին և աշխարհի կնճոռոտ հարցերը կը ջանան լուծել:
Անոնք որոնք պատրաստուած կ'երթան այս ժողով այցելութիւն-
ներուն, ջահաւոր կ'ելլեն, իսկ անոնք որոնք անպատրաստից կամ
անմտօրէն հոն կը գտնուին, վնասով կը վերադառնան իրենց
երկիրը:

Ես հաւատացողն եմ, որ Աստուած ոչ միայն անհատները
կ'այցելէ, այլ՝ նաեւ ազգերը, տալու անոնց օրհնութիւն, ուղղութիւն
և տեսանելիութիւն: Պէտք է մոռնալ և ուրանալ երբեք, որ այս
տեսանելի աշխարհ իրականութեան ետին, կայ նաեւ, ներկայ
բնական աչքին աներեւոյթ, աւելի մեծ և իսկական իրականութիւն
ուր մեզի երեւցած իրականութիւնը՝ բուն Ճշմարտին միայն
ցուցումն է: Այս Վեհ և Ճշմարիտ իրականութիւնը չփաստուիր,
այլ՝ միայն որոնումի և հոգեկա՛ն թոխչփի փորձառութեամբ կը
զգացուի հոգիին պայծառ աչքերովը: Այդ ալ միայն առանձնա-
ջընորհեալներուն համար:

Ինչո՞ւ միայն առանձնաջնորհեալներուն:

Ձեմ գիտեր: Սակայն այդպէս է:

Յիսուս Քրիստոս 12 աջակերտներ ուներ, սակայն Պայծառա-
կերպման Հոգեղէն փորձառութիւնը միայն երեք աջակերտներու
ջընորհուեցաւ: Նաեւ Յիսուս պատուիրեց այդ երեքին որ մարդու
բան չ'ըսեն: Ինչո՞ւ արդեօք, Յիսուսի՛ հարցնել պէտք է ...

ԱՐԻ՛ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՐՅՆ ՄԵՐՈՅ

Արի՛ Աստուած, ելի՛ր Աստուած, վեր կաց, կամ մօ՛տ եկուր ով
Աստուած բառերը որ հրամայական են, սակայն ոչ անկիրթ կամ

անֆաղափար: Վերոյիշեալ բացագանչութիւններն ու պոռթկումները, որքան ալ անտաշ թուին ումանց, սակայն իրենց հոգեկան խորքին մէջ միամտութիւն, անկեղծութիւն և *ոյոյիական* մտերմութիւն կը ցոլացնեն:

Երբ նկատենք Նազովրեցի շրջուն Վարդապետի աջակերտներուն վերաբերմունքը իրենց Վարդապետին հետ, հոն ալ կը տեսնենք հրամայողական բազմաթիւ ասութիւններ, որոնք ցոյց կու տան ոչ թէ կոշտութիւն, այլ՝ *մտերմութիւն*, և պատկանելիութեան մօտիկութիւն:

Ինչո՞ւ համար մարդ էակ՝ իր կեանքի և ապրումի հարցերը առանձինն չի լուծեր և Աստուծէ օժանդակութիւն կը հայցէ, նոյնիսկ երբեմն, հրամայական շեշտով:

Մարդ արարած, անհատապէս և հաւաքաբար, կաշկանդուած է իր կամքէն անկախ պատճառներով: Այս կաշկանդումն ու կապանքը՝ մարմնաւոր (հիւանդութիւն) չէ միայն, այլ՝ նաեւ հոգեմտաւոր կախակալում: Աշխարհ գոյատեւած է ու պիտի շարունակէ ապրիլ, թէ անհատապէս և թէ ընկերաֆաղափական շրջանակի մէջ ու շատ դժուար պայմաններու տակ:

Մարդկութիւնը կ'ապրի շարունակական ափի և սարսափի ներքեւ: Այս տիտան կարծուած մարդ էակը տեւապէս կողոպտուած է, անհրաւուած է, բռնաբարուած և տեղահան եղած է բիրտ բանակներու և աւարառու խուժաններու կողմէ: Իսկ այսօ՞ր մարդ կը յափշտակուի և կ'անհրաւուի ֆաղափար և զգեստաւորուած դրամատերերո՞ւ կողմէ: Հայ Ազգին թագաւորութիւնը և անոր ոսկեդարեան Անի մայրաֆաղափը հիմնայատակ կործանողը եղաւ մոնկոլ զօրավար Չարմաղան 1236-ին: Միայն գերակշիռ ուժերու շնորհիւ թշնամին կարողացաւ գրաւել ֆաղափը և դաժան հաշուեյարդար տեսաւ բնակչութեան հետ:

Ինչո՞ւ թակարդուած մարդ էակ, երբ ինքզինքն դէմ յանդիման գտնէ բնութեան և բնական բիրտ և անտաշ ուժերուն՝ չպոռթկայ ու չթախանձէ Աստուծոյ իր կենաց ու մահուան գոյապայքարին համար:

ՈՐ ԱՊԱԿԷՆԳ ԵՍ ՆԵՂԵԼՈՅ

Պատերազմի ընթացքին, զինուորները կ'ապաւինին իրենց զէնքի՞ն կամ թշնամիէն զթութիւն կը խնդրեն: Նաբոլիոն, իր վերջին ճակատամարտին, ապաւինած էր իր հաւատարիմ՝ օժանդակ զօրագունդի աջակցութեան որ ժամանակին չկրցաւ հասնիլ զինք

ազատելու համար:

Հրեաները, յոյները և յուդեացիները ու նաեւ ուրիշ ազգեր ունէին իրենց ապաստանի ֆաղաֆները, ուր ակամայ ոճիր գործողներ կրնային փախչիլ և ապաւինիլ: Պաշտամունքի տաճարները, խորանները նաեւ նուիրական սրբավայրերը՝ ապաւէն և ապաստանարան եղած են դարաւոր պատմութեան էջերուն մէջ, շատ մը ֆաղաֆական և ոճրային յանցանքներու համար:

Տաճարն ու սուրբ խորանը կը ներկայացնեն աստուածային թանձրացեալ տեսանելիութիւնը: Ինչո՞ւ աստուածային ներկայութիւնը, և ոգեկան խորհրդապաշտ զգացողութիւնը, նաեւ ապաւէն և ապաստանարան չնկատել, Յիսուս Քրիստոսի Խաչելութեան ընդմէջէն:

Միայն ուրախութիւն և ճոխութիւն ըմբոջխողներու մէջ փչէր կը գտնուին, որոնք կրցած են ճշմարտապէս ճանչնալ զԱստուած մօտէն և գիտակցիլ Անոր Հոգեկան անսպառ և սփանչելի իրականութեան: Ճոխութեան, փարթամութեան և հարստութեան պատրանքը՝ յաճախ եղծանած ու ոչնչացուցած է իսկական ապրումի խաղաղութիւնն ու անդորրութիւնը:

Մարդկային ձեռներով յօրինուած՝ շօշափելի և տեսանելի աստուածները հարկ էին խնամել, լուալ և զգեստաւորել, զիրենք սպասաւորող ֆահանաներու միջոցաւ: Այս արարքը ապացոյց էր հեթանոս աստուածներու *սահմանաւոր* ուժին և անկարողութեան: Իսկ այն Աստուածը որ Յարուցեալ Քրիստոս յայտնաբերեց, մարդկային օգնութեան կարիքը չ'ունի: Ինչպէս Պօղոս առաքեալ Արիսպագրոսի մէջ յայտարարեց յոյն իմաստասէրներուն.

«Աստուած որ ստեղծեց այս աշխարհը և ինչ որ կայ անոր մէջ. Ա՛ն է Տէրը երկինքի և երկրի. Ան չի բնակիր ձեռակերտ տաճարներու մէջ և ոչ ալ կը պաշտուի մարդոց ձեռներով, որպէս թէ բանի մը կարօտ ըլլար: Ա՛ն է որ կու տայ ամէն բանի կեանք, ջուր և ամէն ինչ... Ան մեզմէ խրաճանջիւրէս հեռու չէ. Բանի որ ան՝մ կ'ապրիմք, կը ջարժիմք և կանք»-Առաք. ԺԷ. 24-27:

Ինչ գեղեցիկ ապահովութիւն և յոյսի ապաստարան է "Աստուած Ճշմարիտ"ը: Անձկութիւն, նեղութիւն և տագնապի փորձառութիւն ունեցող մը կրնայ գիտնալ աստուածային հրաշալի

օգնականութիւնը:

Աղօթող սուրբը, աստուածային ապաւէնը ճաշակելէն ետք՝ փորձառութեամբ կը քաջալերէ իր հաւատակիցները յուսալ և ապաւինիլ աստուածային ներկայութեան և Սրբազան Գոյութեան:

Մարդ թէ՛ անցեալի մէջ և թէ՛ ներկայիս, արջաւանքներ կը կատարէ դէպի երկրագունտի բեւեռները, չիմալայանի բարձունքները և ովկիանոսներու անդունդները: Ոչ միայն գոհացնելու իր անսահման հետաքրքրութիւնը, այլ՝ ի լոյս բերելու մարդկային թափուն և ներոյժ զօրութիւնները փորձարկութեան դնելով մարդու յարատեւութիւնը և հոգեկան, մտային ու մարմնական տոկունութիւնը:

Նոգեկան արջաւանքներու ընթացքին սուրբերը երբ նեղութիւններ կրեն և անանցանելի արգելքներու ֆանդիպին, հո՛ն կը տեսնեն Աստուծոյ օգնութիւնն ու Անոր ներկայութիւնը որպէս ապաւէն ու ապաստանարան:

Մարտ 22, 1991 Թորոնթօ

ՍԱՂՄՈՍ 51

Աստուած ողորմած, ինձի ողորմէ,
Անհուն գրթութեամբդ իմ մեղքնս քաւէ,
Ամէն յանցանքես լըւա, զիս մաքրէ,
Եւ իմ մեղքերես, ով Տէր, զիս սրբէ:

Զանգի յանցանքներս յայտնէ են ինձի,
Մեղքս ալ միջոս աչքիս առջին կը կայնի,
Մինակ Զեզի դէմ ես մեղանչեցի,
Ու մեծ չարութիւն առջեդ գործեցի:

Մաքրէ մըջտիկով որ ես սրբանամ,
Ջիւնէն աւելի ճերմակ ես ըլլամ,
Ամէն մեղքերես Դուն զիս ազատէ,
Մըխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ:

Ով Տէր, ներսիրիս սուրբ սիրտ ըստեղծէ,
Ինձի նորոգուած հոգի մը շնորհէ,
Զիս բու երեսէդ բընաւ մը ձրգեր,
Ու բու Սուրբ Հոգիդ ինձմէ մը առներ:

Զանգի, ով Տէր, Դուն գոհեր չես կամիր,
Եւ ողջակէզներ բընաւ չես հաւնիր,
Տէրոջ հաւնած գոհն կոտորած հոգին է,
Խոնարհ սրտին սէրն Անոր հաճոյ է:

Մաքսաւորը մէկ կողմ կեցած էր և
կուրծքը կը ծեծէր ու կ'ըսէր.

«Աստուած, ներէ՛ ինձի՝ մեղաւորիս»